

## ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՐՑԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ռ. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ  
ԳՊՀ հայոց լեզվի ամբիոնի լաբորատոր

Իբրև երկկազմ նախադասության գլխավոր անդամներ՝ ենթական և ստորոգյալը ցույց են տալիս համապատասխանաբար առարկա և այդ առարկային վերագրվող հատկանիշ: Ի տարբերություն ենթակայի՝ ստորոգյալը նախադասության առանցքն է, առանց նրա նախադասությունը չի կարող կայանալ:

Ես հավատում եմ: Դայրը ծեր է: Տղան գնացել է տուն: Նա խոստանում է լոել: Կրերես քո փաստաթղթերը: Բերված կառուցները երկկազմ են. ունեն ենթակա (ես, հայրը, տղան, նա, դու) և ստորոգյալ (հավատում եմ, ծեր է, գնացել է, խոստանում է լոել, կրերես), որն իրեն բնորոշ դիմայնության և ժամանակայնության կարգերի միջոցով հատկանիշը վերագրում է ենթակային ոչ թե լրացական, այլ հավասարական հարաբերությամբ: Ենթական թերևս կարող է զեղչվել՝ նախադասության մեջ հանդես գալով ըստ անհրաժեշտության: Նման դեպքում կառուցը պահպանվում է որպես այդպիսին, քանի որ մյուս գլխավոր անդամը՝ ստորոգյալը, իրեն բնորոշ դիմաթվային ծևավորվածությամբ հնարավոր է դարձնում ենթակայի վերականգնումը: Այսպես՝ խոսելու եմ: Տիտուր էի: Ժամանեց: Այս կառուցները երկկազմ թերի նախադասություններ են և կդառնան լրիվ, եթե վերականգնենք համապատասխան ենթական:

Ես խոսելու եմ: Դու տիտուր էիր: Նա ժամանեց:

Ստորոգյալի կազմության և տեսակների վերաբերյալ լեզվաբանները տարբեր մոտենցումներ են ցուցաբերել, ուստի կփորձնենք, համադրելով դրանք, հանգել որոշակի եզրակացությունների:

Ս. Աբեղյանը, խոսելով ստորոգյալի մասին, գրում է, «Ամեն բայ՝ իբրև խոսքի մաս, մի պարզ բայ-ստորոգյալ է, որն արտահայտվում է միայն մի բայով՝ լինի պարզ, թե բաղադրյալ ժամանակով: Բաղադրյալ բայ-ստորոգյալը արտահայտվում է՝

1. Եմ, լինիմ բայով և մի գոյական կամ ածական լրացումով, որ ասվում է ստորոգյալ:

2. Դառնալ, կոչվել, համարվել, թվալ և այլն բայերով և մի գոյական կամ ածական լրացումով, որ ասվում է ստորոգելիական վերադիր»:<sup>1</sup>

Ի դեպք, նման ստորոգյալի կազմում խոսք կազմող գորություն ունի ոչ թե ստորոգյալը, այլ է բայը, որը ստորոգում է ցույց տալիս:

Ս. Աբրահամյանը նույնպես ընդունում է ստորոգյալի երկու տեսակ՝ ըստ կազմության՝ պարզ և բաղադրյալ, ըստ բաղադրիչների նա ստորոգյալը բաժանում է բայական և անվանական տեսակների: «Պարզ է միայն խոնարհված բայով արտահայտված ստորոգյալը: Այսպես՝ Նա ինձ հանդիմանեց: Ծուխը երկինք էր բարձրանում: Դու պիտի չմոռանաս: Նետևիր խորհուրդներին:

Բաղադրյալ է այն ստորոգյալը, որը, բացի խոնարհված բայից, իր կազմում ունի նաև այլ խոսքի մաս:

<sup>1</sup> Ս. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 367:

*Ես ուսանող եմ: Նրանք պատրաստ են : Քո նամակը չորրորդն է: Տղան ուզում էր հայտնել այդ լուրը:*

Բաղադրյալ ստորոգյալը կազմվում է.

1. Որևէ խոսքի մասով և օժանդակ բայով, որը այս դեպքում կոչվում է հանգույց կամ էական բայ /Դա իին է: Դա մի իին երկիր է/:

2. Եղանակավորիչ բայով և անորոշ դերբայով /Չփորձե՞ս առարկել: Ուզում են նկարել/:<sup>2</sup>

Լեզվաբան Խ. Բաղիկյանը և Մ. Ասատրյանը միայն խոնարհված բայով արտահայտված ստորոգյալին տալիս են «բայական» անվանումը՝ այն բայի միայն պարզ ժամանակածով արտահայտված /գրեցի, գրեմ, կգրեմ/ ստորոգյալների հետ չշփորելու համար. չ<sup>3</sup> որ այդ դեպքում սահմանման շրջանակներից դուրս են մնում բայի մյուս, վերլուծական /բաղադրյալ/ ժամանակածներով արտահայտված ստորոգյալները /գրում եմ, ես, է/:<sup>4</sup>

Պարզ /բայական/ ստորոգյալը արտահայտվում է բայի բոլոր եղանակների բոլոր ժամանակածներով՝ լինեն դրանք համադրական, թե վերլուծական:

Խորունկ մի ցավ կրծում էր նրա հոգին: *Փայտահատը մտավ անտառ:* Գնիր աշխարհի ամենալավ բանը: Գնամ, տեսմեն նրան և կանխեն վտանգը: *Պիտի չմոռանաս քո խոստումը:*

Պարզ /բայական/ է համարվում նաև երկրորդական բաղադրյալ ժամանակածներով կազմված ստորոգյալը, որը կազմվում է համակատար, հարակատար, ապառնի դերբայներով ու լինել բայի խոնարհված ձևերով: Այսպես՝

*Նա գնալիս է լինում / եղել, կլինի/:*

*Նա գնացած է լինում/ եղել, կլինի/:*

*Նա գնալու է լինում/ եղել, կլինի/:*

Մ. Աբեղյանը բայական է համարում նաև հարադրական բայերով կազմված ստորոգյալները:<sup>4</sup>

*Ծափ է տալիս ու ծիծաղում: Lwag է լինում ու պատմում գլխով անցածը:*

Գ. Զահուկյանը, ընդհակառակը, հարադրական, գուգադրական բայերով արտահայտված կառույցները անվանում է բարդ ստորոգյալներ:<sup>5</sup>

*Վրա տվեց և սկսեց հարցաքննել:*

*Շատ էր բերել-տարել, արել-դրել ու հիմա արդեն չէր կարողանում:*

*Քամին քշում-տանում էր տերևները:*

Յարադիր բայերի մեջ խոնարհվում է միայն բայ բաղադրիչը, մինչդեռ գուգադիր բայերը, ինչպես տեսնում ենք, երկուսն էլ խոնարհվում են՝ դառնալով մեկ ստորոգյալ:

Բայական հարադրությունների մեջ են քննարկվում նաև անորոշ դերբայ +

<sup>2</sup> Աբրահամյան Ս, Պատճենասյան Ն, Բաղիկյան Խ, Օհանյան Յ, ԺՎՀ շարահյուսություն, հատոր 3, Երևան, 1976, էջ 156:

<sup>3</sup> Խ. Բաղիկյան, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2008, էջ 84: Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 1987, էջ 155:

<sup>4</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 367:

<sup>5</sup> Գ. Զահուկյան, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 412-413:

տալ կապակցությունները, որոնք պատճառական իմաստ են արտահայտում:

*Որդուն գրել տվեց նամակը: Բացել տվեցի դուռը և մտա ներս:*

*Տալ բայի միջոցով պատճառական սեռ է արտահայտվում հատկապես այն դեպքերում, երբ պատճառական սեռ-ածանցը չի կիրավում:*

Իբրև պարզ ստորոգյալ են հանդես գալիս նաև դարձվածային հարադրական բայերը, որոնց բաղադրիչները կորցրել են իրենց բառական իմաստները՝ ձեռք բերելով փոխաբերական իմաստ:

*Օր՝ Ծերունին գլուխ տվեց և հեռացավ: Աչք էր դրել իմ ունեցվածքին:*

Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ խոսքում հանդիպում են կրկնվող բայերի շաղկապով կապակցություններ. հնարավոր է նաև, որ երկրորդ բառը լինի առաջինի ժխտումը:Օր՝ Լինում է, չի լինում: Գնում է, գնում:

Ի տարբերություն պարզ ստորոգյալի, բաղադրյալ ստորոգյալը, իր տեսակներով հանդերձ, տարբեր մոտեցումների տեղիք է տվել:

Ե. Աղայանը դիմավոր բայով արտահայտված ստորոգյալով նախադասությունները համարում են բայական, իսկ այն նախադասությունները, որոնց ստորոգյալը բայ չէ, անվանական. այսպես՝ Ես խոսում եմ բայական նախադասություն ե, իսկ Ես հպարտ եմ անվանական:<sup>6</sup>

Ստորոգյալի տեսակների վերաբերյալ իր ուրույն մոտեցումն ունի Ռ. Իշխանյանը: Յամարելով, որ անվանական և բայական տեսակները սոսկ ուսւերենի ազդեցությամբ են (Օհ խցօշակ)՝ նա գտնում է, որ հայերենում Նա նկարիչ է ծեզ հանդես է գալիս պարտադիր հանգույցի հետ միասին, իսկ ուսւերենի նմանությամբ պետք է լիներ՝ Նա նկարիչ: Շարունակելով իր միտքը՝ Իշխանյանը մերժում է նաև դիմավոր բայ+անորոշ դերբայ կառույցը բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ համարելը՝ նշելով, որ դրանցում (ուզում է հեռանալ, անհրաժեշտ է հեռանալ, պետք է հեռանալ, սկսեց աշխատել) առկա է ստորոգյալ +լրացում (ուզում է հեռանալ, սկսեց աշխատել) կամ ստորոգյալ +ենթակա (անհրաժեշտ է հեռանալ, պետք է հեռանալ):<sup>7</sup>

Անդրադարձնաք բաղադրյալ ստորոգյալի տեսակներին առանձին-առանձին:

1. Եմ, լինեմ բայ+գոյական, ածական կամ այլ խոսքի մաս լրացում կառույցը: Եմ, լինել բայը, ինչպես նշեցինք, անվանաբայական ստորոգյալի կազմում կոչվում է հանգույց, իսկ նրա հետ հանդես եկող խոսքի մասը՝ ստորոգելի:

Ստորոգելիի դերում գոյականը կարող է հանդես գալ տարբեր հոլովածերով՝ ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական:

Ուղղական հոլովով. Նա աշակերտ է (անորոշ առում): Նա աշակերտն է (որոշ յալ առում):

Սեռական հոլովով. Գիրքը ուսանողի է:

Տրական հոլովով. Թուզունը ծարին է:

Բացառական հոլովով. Վերարկուն բրդից է: Շապիկը բամբակից է:

Գործիական հոլովով. Փլավը համով է: Գիրքը նկարներով է:

Ներգոյական հոլովով. Նա ծանր վիճակում է:

Բուն սեռական հոլովով դրված վերադրիները հիմնականում հատկացուցչա-

<sup>6</sup> Ե. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 552:

<sup>7</sup> Ռ. Իշխանյան, Ժարահյուսություն, Երևան, 1986, էջ 121:

յին և որոշային հատկանիշներ են ընդգծում: Այսպես՝ Գիրքը ուսանողի է: Ժամացույցը պատի է: (Ուսանողի գիրքն է, պատի ժամացույցն է): Փոխանուն սեռականները հանդես են գալիս հոդով /ուսանողինն է, պատինն է):

Տեղի իմաստով գործածված տրական հոլովածներ որոշ լեզվաբաններ համարում են տեղի պարագա, իսկ բայական մասը՝ բայական ստորոգյալ:<sup>8</sup>

**Այս տունը գետի ափին է: Երեկվանից նա տանն է:**

Նրանք պարագայի կիրառություն են համարում նաև ներգոյական հոլովով հանդես եկող ստորոգելի գոյականը, որը նույնպես տեղի իմաստ ունի:

**Յուրը սենյակում է: Նստարանը այգում է:**

Մինչեւ Յիշվանդը ծանր վիճակում է նախադասության մեջ վիճակում գոյականը արտահայտում է դրություն, վիճակ և ոչ թե տեղի իմաստ:

Ածականները շատ են հանդիպում ստորոգելիի դերում:

**Նա ուրախ է: Քո խսքերը ամկեղծ են: Երգը ազգային է:**

Թմվականները ստորոգելի են դառնում և որոշյալ, և անորոշ առումով:

**Նրանց թիվը հինգն է: Դրանց գումարը երկուս է: Քո որդին առաջինն է:**

Ստորոգելի են դառնում բոլոր անձնական դերանունները, հարցահարաբերական դերանունների մի մասը, իսկ մյուսներից՝ առարկայանից և որականից դերանունները:

Դերանվանական որոշիչները (ստորոգելիները) ինքնին, առանց գոյականի գործածվել չեն կարող, եթե գուգահեռաբար գոյականական արժեք չեն ստանում (նրանց հետ միասին առարկան չի ենթադրվում):

**Քո ասած տունը ո՞րն է: Այստեղ եղածները բոլորն են:**

Կան դերանուններ, որոնք ստորոգելի դերում առանձին չեն գործածվում, օր՝ ողջ, ամեն, մի:<sup>9</sup>

Որոշյալ դերանունները ստորոգելիի դերում գործածվում են պարտադիր որոշիչ հոդով:

Դերբայներից ստորոգելիներ են դառնում միայն անկախները, բացառությամբ համակատարի: Անորոշ և ենթակայական դերբայնները ստորոգելի են դառնում և հոդով, և առանց հոդի:

**Իմ ուզածք քո աշխատելն է: Դա երգե՞լ է, որ դու ես երգում: Կարևոր երգելն է: Նա լավ երգող էր: Նա ամենալավ երգողն էր:**

Յարակատար դերբայը ստորոգելի է դառնում փոխանվանական կիրառությամբ: Օր՝ Դա նրա գրածն էր:

Պարզապես դրություն, վիճակ ցույց տվող հարակատար դերբայը օժանդակ թայի հետ միասին դառնում է սովորական բայական ստորոգյալ:

**Նա նստած է պատշգամբում: Գիրքը ընկած է հատակին:**

Մակրայները ստորոգելի են դառնում սովորական կիրառությամբ:

**Այդ տունը հեռու չէ: Միշոցառումը հիմն է:**

Ստորոգելի կարող են դադալ նաև կապային կապակցությունները /կապ+հոլոված բառ/:

Օրինակ՝ **Այդ պատմությունը նրա մասին է: Սա քո վերադառնալու առքիվ է:**

Ստորոգյալի մյուս տեսակը կազմվում է դադալ, լինել, համարվել, թվալ և

<sup>8</sup> **Պապոյան, Բարիկյան**, ժիշտ շարադրություն, Երևան, 2003, էջ 164:

<sup>9</sup> **Գ. Զահորեկյան**, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 111:

նմանատիպ վերացական բայ+գոյական կամ ածական լրացում կաղապարով:

Նա ուսանող է նախադասության մեջ ուսանող ստորոգելին ցույց է տալիս նա ենթակայի մնայուն հատկանիշը, իսկ նա ուսանող դարձավ նախադասության մեջ դարձավ բայց ցույց է տալիս մի հատկանիշ, որն ուսանողը ծեռք է բերում և ոչ թե ունի: Այդպիսի բաղադրյալ բայ+ստորոգյալի մեջ ստորոգյալն արտահատվում է ոչ բայինաստով միայն և ոչ ստորոգելիհական վերադրով միայն, այլ երկու սովոր միասին:<sup>10</sup>

Նման վերացական բայերի հետ իրենց լրացումները, փաստորեն, ստանում են մի բայի նշանակություն և երեմն կարող են մի բայով փոխարինվել: Օր՝ գոլորշի դառնալ-գոլորշիանալ, փոշի դառնալ-փոշիանալ:

Տարբեր կարծիքներ են հայտվել ստորոգյալի՝ դիմավոր բայ + անորոշ դեր-բայ կառույցի հետ կապված:

Գ. Զահորկյանը այս կառույցները նույնպես համարում է բարդ ստորոգյալ /էջ 404/:

«Բարդ է կոչվում պարզ կամ բաղադրյալ ստորոգյալի և անորոշ դերբայի գուգորդումը՝ ուզում է գնալ, կարող է գնալ, պարտավոր է գնալ»<sup>11</sup>:

Նա բարդ ստորոգյալների շարքին է դասում նաև անդեմ /միադեմ/ կապակցությունները /անհրաժեշտ է, պետք է, հարկավոր է + գնալ՝ նշելով, որ եթե դիմավոր բայ+անորոշ դերբայ կապակցություններում ենթական դիտվում է որպես ակտիվ կողմ, ապա երկրորդների դեպքում՝ որպես պասիվ կողմ:»<sup>12</sup> Ի դեպ, անորոշ դերբայը կարող է հանդես գալ նաև հոլովված, այսպես՝ դադարում է քայլել /ուց/, գրել/ուց/, սկսում է քայլել:

Վ. Առաքելյանը բարդ է համարում անվանական և բայական ստորոգյալների միասնությունը /ուրախ եմ հայտնել, պարտավոր եմ երդումն դրժել/:<sup>13</sup>

Գյուլբուրդայանը դիմ. բայ+անորոշ դերբայ կառույցը կոչում է բայական բաղադրյալ ստորոգյալ /խուսափիում է պատասխանել, ուզում է հայտնել/:

Մ. Ասատրյանը ունի որոշակիորեն տարբերվող տեսակետ. ըստ նրա՝ անցողական բայերից կախված անորոշ դերբայը ուղիղ խնդիր է. այսպես՝ սիրում է նկարել /հ՞նչ է սիրում/, իսկ անանցողական բայերից կախված անորոշ դերբայը անուղղակի խնդիր է. այսպես՝ խուսափիում է պատասխանել/ուց/:<sup>14</sup>

Դիմավոր բայ+անորոշ դերբայ կառույցն իրու ստորոգյալի տեսակ չի ընդունում նաև Ռ. Իշխանյանը՝ համարելով, որ դրանք պետք է դիտարկել ենթակա+ստորոգյալ, կամ ստորոգյալ+լրացում կապակցություններ. այսպես՝ ուզում էր հեռանալ, անհրաժեշտ էր հեռանալ կառույցները նա համարում է ենթակա+ստորոգյալ, իսկ սիրում է խոսել, ուզում է խոսել ձևերը՝ ուղիղ խնդիր՝<sup>15</sup> պատճառաբանելով, որ նման տիպի կառույցներում ուղիղ խնդիր դերում հան-

<sup>10</sup> Մ. Աբեղյան, Յայոց լեզվի տեսություն, Երևան, էջ 368: Գ. Զահորկյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմնունքները, Երևան, 1974, էջ 412-413:

<sup>11</sup> Նույնը, էջ 413:

<sup>12</sup> Նույն տեղը:

<sup>13</sup> Վ. Առաքելյան, Յայերենի շարահյուսություն, հատոր Ա, Երևան, 1958, էջ 146-148:

<sup>14</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987, էջ 159-160:

<sup>15</sup> Ռ. Իշխանյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Երևան, 1986, էջ 194:

դես եկող անորոշ դերբայը կարելի է դարձնել ենթակա՝ ներգործական կառուցվածքի նախադասությունը կրավորականի փոխակերպելիս /սիրում է խոսել-խոսելը սիրվում է, սկսեց թագավորել-թագավորելը սկսվեց/, ինչպես նաև անորոշ դերբայները կարելի է փոխարիմնել գոյականներով /սիրում է գիրքը, սկսեց աշխատանքը/:

Ընդունելով այն լեզվաբանների մոտեցումը, որոնք իբրև բաղադրյալ ստորագյալի տեսակ են համարում դիմավոր բայ+անորոշ դերբայ կապակցությունը՝ ուշադրություն դարձնենք այդ կառուցների վրա: Այսպես՝ ուզում է նկարել, ցանկացավ արտասանել, խուսափում էր երգելուց և նմանատիպ կառուցները, որոնք դիմավոր ուզում է, ցանկացավ, խուսափում էր բայերի և անորոշ դերբայների /նկարել, արտասանել, երգելուց/ միասնություն են, կարելի է դիտարկել նաև այլ կերպ. մի դեպքում դրանք կարող ենք համարել արդեն փոխակերպված երկրորդական նախադասություններ /Ուզում է, որ նկարի: Ցանկացավ, որ արտասանի: Խուսափում էր, որ երգեր: Այս դեպքում գործ ունենք փոխակերպման հետ, որի արդյունքում ունենք դերբայական անդամ և ոչ թե դերբայական դարձված: Մինչդեռ եթե մի փոքր ընդարձակենք երկրորդական նախադասություններ՝ Ուզում էր, որ գեղեցիկ նկարի: Ցանկացավ, որ տպավորիչ արտասանի: Խուսափում էր, որ հարցերին պատասխաներ և փոխակերպենք դրանք, կունենանք հետևյալ կառուցները. Ուզում էր գեղեցիկ նկարել: Ցանկացավ տպավորիչ արտասանել: Խուսափում էր հարցերին պատասխանել/ուց/: Փաստորեն, եթե ընդգծված նախադասությունները համարենք փոխակերպված կառուցներ, ապա ստորոգյալների լրացումները /գեղեցիկ, տպավորիչ, հարցերին/ պետք է ընդունենք իբրև կողմնակի /դերբային լրացնող/ անդամներ:

Այս հարցի հետ կապված՝ հիշենք նաև ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ ուզում եմ զնամ, մոռացա ասեմ, բերեց տա և նման կառուցները, որոնք, եթե նույն սկզբունքով մոտենանք, կարող ենք դիտարկել որպես բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում գեղշված են շաղկապները. այսպես՝ Ուզում եմ, որ զնամ: Մոռացա, որ ասեմ: Բերեց, որ տա:

Այնուամենայնիվ, կարծում ենք, ընդունելի է դիմավոր բայ+անորոշ դերբայ կապակցությունը մեկ ընդհանուր ստորոգյալի տեսակ համարելը՝ բաղադրյալ բայական ստորոգյալ անվան տակ: Այս դեպքում կունենանք ստորոգյալների 2 տեսակ՝ պարզ կամ բայական և բաղադրյալ, որն իր հերթին կունենա ենթատեսակներ՝

1. Եմ, լինել բայ + որևէ անուն՝ խոսքի մաս, այսինքն՝ ստորոգելի+հանգույց կառուցը,

2. դառնալ, թվալ, համարվել և նման վերացական բայեր+գոյական կամ ածական լրացում, որը կկոչվի ստորոգելիհական վերադիր,

3. դիմ. բայ+անորոշ դերբայ կառուցը, որի մեջ կներառվեն նաև միադիմի, պարտավորական, անհրաժեշտական, կարելիհական և նման իմաստներ արտահայտող բայեր+անորոշ դերբայ կառուցները:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՈՒՆ

- Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
- Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Բադիկյան Խ., Օհանյան Յ., ԺԷԼ շարահյուսություն,

հասոր 3, Երևան, 1976:

3. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:
4. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հասոր Ա, Երևան, 1958:
5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 1987:
6. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2008:
7. Իշխանյան Ռ., ԺԱԼ շարահյուսություն, Երևան, 1986:
8. Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան 1974:

## ВОПРОС СКАЗУЕМОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

*R. M. SARGSYAN*

Виды сказуемого, как одного из главных членов предложения, были и остаются одним из интересных вопросов синтаксиса. Автор статьи приводит точки зрения разных лингвистов о формах образования простого и составного сказуемого и, пытаясь сопоставить их, приходит к определенным выводам.

## QUESTION OF THE PREDICATE IN THE MODERN ARMENIAN LANGUAGE

*R. M. SARGSYAN*

Types of predicates, as one of the principal members of the sentence, were and remain one of the interesting questions of syntax. The author brings various viewpoints of different linguists on forms of simple verbal and compound nominal predicates, and trying to compare them, comes to certain conclusions.

## ОПРЕДЕЛЕНИЕ СОДЕРЖАНИЯ И ЦЕЛИ АСПЕКТА «ЯЗЫК СПЕЦИАЛЬНОСТИ» ПРИ ОБУЧЕНИИ СТУДЕНТОВ-ФИЛОЛОГОВ РУССКОМУ ЯЗЫКУ

**А. М. МУХСИХАЧОЯН**

*Кандидат пед. наук, зав. кафедрой  
русского языка и литературы ГГУ*

Известно, что в вузе аспект «язык специальности» является одним из ведущих аспектов в практике преподавания русского языка как иностранного. Данный аспект помогает подготовить студентов к их будущей профессиональной деятельности, научить переводить специальную литературу с русского языка на родной язык, составлять аннотации, писать рефераты и т. д.

Цель аспекта «язык специальности» - помочь студентам освоить одну из функциональных подсистем современного русского языка – научный стиль речи (и уже – язык специальности), что является необходимым условием успешного овладения студентами их профессией.